



ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍԵՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Անթիլիաս, Լիբանան

ԱՐՑԱԽԻՆ ՀԵՏ ԵՆՔ

Արցախին հետ էինք երե՛կ, Արցախին հետ ենք այսօ՛ր եւ մի՛շտ...:
Որովհետեւ՝

Արցախը մե՛նք ենք, ո՛ղջ հայութիւնը:

Արցախը իւրաքանչիւր հայն է:

Արցախը մեր հաւատքին ու կամքին, մեր ողջ էութեան անբաժանելի մասն է:

Ո՛չ ոք կրնայ Արցախը իսլել մեր կեանքէն, պահանջատէր հայու մեր վճռակամութենէն:

Այո՛, Արցախը այսօր կ'արիւնի իր սրբազան հողով, իր արի ժողովուրդով: Տազնապը խոր է. հետեւանքը ահաւոր:

Սակայն, մենք կը մնանք հզօր նոյնիսկ մեր տառապանքին մէջ: Կը մնանք հզօր՝ մեր անխորտակելի հաւատքով, անսասան յոյսով եւ ամրակուտ վճռակամութեամբ: Մեր պահանջատիրական պայքարէն ո՛չ ոք կրնայ մեզ հեռացնել:

Ինչպէս 1915-ին նաեւ 2023-ին հայ ժողովուրդը զոհը դարձաւ քան-թուրանական ցեղապաշտ քաղաքականութեան՝ նոյն ցեղակիցներու արիւնաթաթախ ձեռքերով:

Մենք չենք կրնար լուր մնալ Արցախի ժողովուրդին, մե՛ր ժողովուրդին դեմ ծրագրուած ու գործադրուած ցեղասպանութեան նկատմամբ:

Պիտի դակենք փակ դռները իրաւունքի պաշտպան ազգերուն ու պետութիւններուն եւ յանուն մեր իրաւունքներուն ու նահատակներուն արդարութիւն պիտի պահանջենք:



ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍՄԱՐՄԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Անթիլիաս, Լիբանան

Յուսահատությունը, յուսախաբությունը, անտարբերությունը, պարտողականությունը հեռու պետք է վանենք մեր սրտէն, մեր միտքէն եւ մեր կեանքէն: Մենք պայքարի ժողովուրդ ենք, հաւատքով շաղախուած, կամքով կռանուած եւ յոյսով զինուած:

Այո՛, մենք Արցախին հետ ենք: Արցախին հետ ըլլալ կը նշանակէ՝

- Մասնակից դառնալ՝ ի խնդիր Արցախի իրաւունքներուն տեղի ունեցող բողոքի ու զօրակցութեան ժողովրդային հաւաքներուն:
- Մասնակից դառնալ՝ Արցախի ժողովուրդին մարդկային, պատմական ու հոգեմտաւոր իրաւունքները պաշտպանող ծրագիրներուն:
- Մասնակից դառնալ՝ ըկերա-տնտեսական օժանդակութեան կարօտ մեր ընտանիքներուն ի նպաստ կատարուող աշխատանքներուն:

Մեր ժամանակակից պատմութեան ներկայ ճակատագրական պայմաններուն մէջ, մեր հին թէ՛ նոր նահատակները կոչ կ'ուղղեն մեզի՝

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԶՕՐԱԿՈՉ

Մեր ազգը պետք է դառնայ միակամ՝ խմբուելով մեր ազգին ու հայրենիքին գերագոյն ու ընդհանրական արժէքներուն, իտեալներուն եւ շահերուն շուրջ:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ